ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0009, Տերյան 89, 010-52-01-23

№ /46.3/30211-2024
03.09.2024թ.
Մտ/ 38-02, 04-09-2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ,
ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ասատրյան,

Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված Ձեր՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի N 49-01/1 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական արհմիության խորհրդի ուղերձը (այսուհետ՝ Ուղերձ) հասցեագրվել է Քաղաքացիական ծառայության գրասենյակ, որում բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Պետական համակարգում արժանապատիվ աշխատանքի պայմանների ապահովման, այդ թվում աշխատավարձի բարձրացման խնդիրները գտնվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության ուշադրության կենտրոնում: Դեռևս 2019 թվականի հունվարից պետական բոլոր մարմիններին հատկացվեցին պարգևատրման հավելյալ ֆոնդեր, որի միջոցով պետական մարմիններում բարձրացվեց աշխատավարձը:

2023 թվականի հունվարի 1-ից բարձրացվեց նաև պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը (այսուհետ՝ բազային աշխատավարձ) և սահմանվեց 83200 ՀՀ դրամ:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է բազային աշխատավարձի չափի որոշման կանոնը, այն է՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն

ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը:

Ներկայում բազային աշխատավարձը կազմում է նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսը, այսինքն՝ Օրենքի կարգավորումների համաձայն՝ բազային աշխատավարձի բարձրացումը պայմանավորված է ոչ միայն նվազագույն աշխատավարձի վերանայումով, այլև այն կարող է բարձրացվել նվազագույն աշխատավարձի գործող չափի պահպանման պայմաններում: Որպես կանոն աշխատավարձի բարձրացման ծրագրերը քննարկվում են՝ հաշվի առնելով ոչ միայն սոցիալական պայմանները, այլև երկրի ֆինանսատնտեսական հնարավորությունները:

Ուղերձում միջին աշխատավարձի վերաբերյալ տվյալների կապակցությամբ հարկ է նշել, որ 2021 թվականին պետական ծառայությունում միջին աշխատավարձը կազմել է 341565 ՀՀ դրամ (աղբյուրը՝ պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ 2021 թվականի զեկույց, այսուհետ՝ Զեկույց), որը չի ներառում պետական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև պաշտպանության ոլորտում բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձի վերաբերյալ տվյալները: Զեկույցի տվյալների համաձայն՝ 2021 թվականին պետական ծառայությունում միջին նվազագույն աշխատավարձը կազմել է 95903 ՀՀ դրամ, իսկ միջին առավելագույն աշխատավարձը՝ 1650130 ՀՀ դրամ, նվազագույն պաշտոնային դրույքաչափը՝ 89103 ՀՀ դրամ: Հարկ է նշել նաև, որ 2023 թվականի հունվարի 1-ից բազային աշխատավարձը բարձրացվել է 25.79 տոկոսով, բացի այդ կրտսեր խմբի պաշտոններում հիմնականում ընդգրկված են լինում աշխատաշուկա առաջին անգամ մուտք գործող անձինք՝ երիտասարդները, ովքեր որոշակի փորձ ձեռք բերելուց հետո տեղափոխվում են ավելի բարձր պաշտոնների:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ՝ պետական հատվածում ֆինանսական շահադրդման համակարգի լավարկումը դիտարկվում է հանրային ծառայության գրավչության մյուս գործիքների ու բաղադրիչների հետ մեկ ամբողջության մեջ, որի շրջանակում 2025 թվականին

նախատեսված է հանրային ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համակարգի վերանայում:

Հարկ է նշել նաև, որ համայնքային ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» օրենքներով. տեղական ինքնակառավարումը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ինչ վերաբերում է Ուղերձում նշված 2-րդ խնդրին, այդ կապակցությամբ էլ տեղեկացնում ենք, որ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1871-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով նախատեսված են «Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը» և «Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները» միջոցառումները: Հիշյալ միջոցառումների իրականացման համար՝ որպես կատարող մարմին, սահմանված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, իսկ որպես համակատարող մարմիններ՝ Արդարադատության նախարարությունը, Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, ուստի վերոնշյալ միջոցառումների իրականացման ընթացքում քննարկման առարկա կդառնա նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ նախատեսելու հարցը:

9/3/2024

X

VERIFIED OCSP 03/09/2024 17:34:34 GMT+4

Signed by: KALASHYAN VACHE 3014660477

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ**

Կատ.՝ Աշխատանքի վարձատրության
քաղաքականության վարչության գլխավոր իրավաբան

Աղասի Ստեփանյան
Հեռ՝. 515494